ՍԻՐԱՆՈՒՇ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
հայ նոր գրականության պատմության բաժնի վարիչ
siranush.margaryan.71@mail.ru
ORCID ID: 0000-0003-1009-3514
DOI: 10.54503/978-5-8080-1568-5-112

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԸ՝ ԱՋԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԲԱՆ

Բանալի բառեր՝ *Սերգեյ Սարինյան, հայոց գրականության երկու դարը, գրականության պատմաբան, գրաքննադատություն, գրականության փիլիսոփայություն, ազգային գաղափարաբանություն, պատմաքննական տեսություն, ազգային ոգի, պատմության փիլիսոփայություն:*

Ներածություն

Ինչպես XX դարի երկրորդ կեսի, այնպես էլ XXI դարի առաջին երկու տասնամյակների հայ գրականագիտությունը անհնար է պատկերացնել առանց ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի պատկառելի ներկայության:

Սերգեյ Սարինյանը գրականության պատմաբան էր ու փիլիսոփա, բացառիկ տեսաբան ու գիտության կազմակերպիչ, մանկավարժ, ում հայագիտական ծանրակշիռ գործունեությունը, հայ գիտական մտքի բարեփոխմանն ու զարգացմանն ուղղված ջանքերն անուրանալի են, ունեցած ներդրումը՝ արժեքայնությամբ և ծավալայնությամբ ահռելի, բազմաթիվ էջերում՝ դեռևս չընթերցված:

Սարինյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում հայ բազմադարյան ողջ գրականությունն էր՝ հին ու միջ-

նադարյան, նոր և նորագույն շրջափուլերով: Գիտական մեծ նեռուժի ու հզոր կամքի տեր անհատականությունն այնտեղ էր, որտեղ կային դեռևս հստակ չբնութագրված գրական իրողություններ ու չլուծված խնդիրներ, չտարորոշված սահմաններ ու սահմանումներ, գրական, քննադատական ու ազգային կյանքի համաժամանակյա ընթացքը քննաբանող ըմբռնումներ ու հիմնադրույթներ: Սարինյանը քչերից մեկն է մեր տեսաբաններից, գրականության հմուտ պատմաբան, ով, իր վերլուծություններում համադրելով պատմականության և գիտականության հիմնարար սկզբունքները, խոսել է գրաքննադատությանն ու գրականագիտությանը ներկայացվող համակարգային պահանջների մասին:

Հենց այս իմաստով Սերգեյ Սարինյանի կերպարը շատ ավելի բազմաշերտ՝ դուրս է միայն գրականագիտական գործունեության շրջանակից. իր մարդկային, գիտական ու ազգային դիմանկարով նա դասական էր դարձել իր օրերում, մի յուրատեսակ մտքի օրենսդիր, որի համբավն ու հեղինակությունը Հայաստանի գիտամշակութային կյանքում գրեթե անհնար էր շրջանցել:

Հոդվածում խոսվում է անվանի գրականագետ-տեսաբանի գիտական գործունեության սկզբունքների, նրա գրականագիտական, գրաքննադատական աշխատանքների, գիտական մեթոդի առանձնահատկությունների մասին: Մասնակի անդադարձ է կատարվում «Ազգային գաղափարաբանություն» պատմաքննական տեսությանը, նրա ելակետային սկզբունքներին ու հիմնարար բանաձևերին:

Զտարյուն գիտնականն ու տեսաբան-փիլիսոփան

Ինչպես բոլոր մեծ մտածողները, որոնց համար գիտությունը համակարգ է ու մտքի կարգաբերություն, այնպես էլ Սերգեյ Սարինյանն իր գիտական բազմարդյուն գործունեության

ընթացքում առաջադրել և հանգամանորեն լուծել է մի կարևորագույն՝ գրականագիտության գիտականացման խնդիրը՝ դիտարկելով այն իբրև առանձին գիտություն գեղարվեստական գրականության համակողմանի ուսումնասիրության, նրա էության, ծագման, գրական երկի գենեզիսի մասին, գիտակարգ՝ երկի կառուցվածքի ու գեղագիտության, գրապատմական ընթացքի մասնավոր ու ընդհանուր օրինաչափությունների, հասարակական մյուս գիտությունների՝ փիլիսոփայության, պատմության, սոցիոլոգիայի, հոգեբանության հետ նրա սերտ կապերի մասին:

Գրականագիտության՝ իբրև առանձին գիտակարգի կանոնակարգումը եղել է նրա գիտական գործունեության հիմունքը: Գրականագիտության ամենաարդիական խնդիրներից մեկը համարելով գրական երկի ձևավորման իմացաբանական հիմքերի քննությունը՝ անվանի գրականագետը փորձում էր ոչ միայն ճշգրտել կոնկրետ գրողների ուսումնասիրության կոնկրետ ոլորտները, այլև հստակեցնել նրանց ստեղծագործությունը այս կամ այն դպրոցի մեջ տեղակայելու պատմա-տիպաբանական բովանդակությունը և նկարագիրը:

Այդ ձեռնարկումների մեջ, իհարկե, առաջնայինը գրականության փիլիսոփայության մասին նրա դիտարկումներն են:

Ավելին, երկար տարիների քննադատական-գրականագիտական գործունեության արդյունքում Սարինյանը ձևաբանել է «գրականության փիլիսոփայություն» հասկացությունը, ճշգրտել նրա էականությունը՝ քննության կենտրոն բերելով ոչ այնքան հարցի «մեթոդաբանական դրվածքը», որքան որ բացելով հետազոտության մի լայնատարած ասպարեզ, որտեղ տրվում է գիտակարգի հստակ սահմանումը:

«Գրականության փիլիսոփայությունը աշխարհընկալման ուրույն փոխաձևություն է, ուր հասկացությունների, իդեաների

տրամաբանական ապացույցները անջատվում են գրողից և վերաճում գրական երկի կամ հերոսի կենսափիլիսոփայության»[1],- գրում է գիտնականը՝ խորապես համոզված, որ գրականագիտության զարգացումը ավելի շուտ գրականության փիլիսոփայությունը բացահայտելու նպատակ պիտի ունենա, քան գրական երկի սոսկ նկարագրական վերլուծության:

«Ի՞նչ է գրականության փիլիսոփայությունը» հարցի պատմաբանական հղումը ուղղակի է. «Ինչո՞ւ կա արվեստի փիլիսոփայություն, կրոնի փիլիսոփայություն, իրավունքի փիլիսոփայություն, պատմության փիլիսոփայություն, բայց չկա գրականության փիլիսոփայություն: Կասեն, թե գեղարվեստի փիլիսոփայության համապատկերում ուրվագծվում է նաև գրականության փիլիսոփայությունը, սակայն դա մասամբ կարող է ստանձնել առարկայի սահմանումը»[2]: Իր հարցադրման զուգահեռի վրա մանրամասնելով Շելլինգի «Արվեստի փիլիսոփայություն» և Հիպոլիտ Տենի «Գեղարվեստի փիլիսոփայությունը» ֆունդամենտալ աշխատությունների հիմնարար դրույթները՝ Սարինյանը գտնում է, թե բոլորովին այլ է փիլիսոփայությունը գրականության մեջ բացահայտելու սկզբունքը. « ...ինչքան էլ գեղարվեստի փիլիսոփայությունը տողանցում է գրականության փիլիսոփայությանը համարժեք դրույթներ, այնուամենայնիվ, առկա են հենց միայն իրեն հատուկ օրենքներ, որոնք կարող են նյութ տալ գրականության փիլիսոփայության հետազոտությանը: Դա կարող է լինել ազգային գրականության պատմական ժամանակի կոնստրուկցիա, գրողի գեղագիտական համակարգի կոնստրուկցիա և անգամ առանձին գեղարվեստական ֆենոմենի կոնստրուկցիա»[3]:

---

[1] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարք,* հատոր 4, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2004, էջ 7:

[2] Նույն տեղում, էջ 6:

[3] Նույն տեղում, էջ 6:

Փիլիսոփայական գրականագիտությունը ընդլայնում է գրականության աշխարհայացքը՝ երկի բովանդակության մեջ դիտարկելով նրա փիլիսոփայական, հոգեբանական, բարոյական և գաղափարական մակարդակները, հնարավորություն ընձեռելով տեքստի բազմաշերտ իմաստների և գրողի՝ որպես հեղինակի ստեղծագործական անհատականության խորքային ճանաչողության: Սա՝ առանձին ստեղծագործողի պարագայում, իսկ գրականության անընդհատական ընթացքի մեջ այն ընդլայնում է տեղային գրականության աշխարհայացքը, ազգայինի մեջ հայտնաբերում համամարդկայինը. և հայ դասական գրականությունը[4] այս երկու կտրվածքներում էլ լիապես ընձեռում է գրականության փիլիսոփայությո՛ւնը ճանաչելու հնարավորությունը: Սարինյանը համոզված էր, որ «որպես աշխարհընկալման ձև, հոգևոր կեցություն և պատմական կոնստրուկցիա, այն միանգամայն իրական է, և, հաստատապես, յուրաքանչյուր ազգային գրականության ներհատուկ է իր փիլիսոփայությունը...»: «Գրականագիտությունը փիլիսոփայական գիտություն է, և պետք է ձգտենք տիրապետել գիտության այդ արվեստին...

[4] Բնավ պատահական չէ, որ «գրականության փիլիսոփայություն» հասկացությունը մեզանում առաջին անգամ 20-րդ դարասկզբին կիրառել է Արսեն Տերտերյանը: Սարինյանն անդրադառնում է նրա քննական մեթոդին՝ ներկայացնելով ուղղակի հղումը հասկացությանը. «Բնական գիտություններից յուրաքանչյուրը ուսումնասիրելով որևէ մասնավոր բնագավառ՝ առաջադրում է ներքին օրենքներ և օրինաչափություններ, որոնք զալիս հարակցվում են մայր գիտության, այսինքն՝ փիլիսոփայության հետ: «Գրականության փիլիսոփայությունը,- գրում է Տերտերյանը,- պետք է զարգանա ու առաջ գնա նման գծով: Մի անգամ ընդմիշտ պետք է ժխտել գրական երևույթների ըմբռնման բնազանցական տեսակետը, պիտի մերժվի և կիրառությունից դուրս մնա և հակառակ ուղղությունը, այսինքն՝ այն կույր ընդհանրացումը, որ ուժով իրար հետ միացնում և շփոթում է տարբեր երևույթները, միմյանց ժխտող և մի ընդհանուր բանաձևի տակ չմտնող հասկացությունները» («Վահան Տերյան. ցնորքի ծարավի և հաշտության երգիչը», 1910, էջ 11)», հատոր 4, էջ 8:

այստեղ է զարգացման նրա հեռանկարը...»,[5]- գրում է գրականագետ- տեսաբանը:

Եվ այսպես, մոտ երեք տասնյակ գրքեր, յոթ ստվարածավալ հատորներում ամփոփված քննադատական հոդվածներ, որոնք ներկայացնում են հայոց գրականության երկու դարերի գեղագիտական-փիլիսոփայական մեկնությունը, գրականության պատմության ու տեսության բազմաթիվ կնճռոտ հարցեր, ակադեմիական կոթողային հրատարակությունների նախաձեռնումներ, պատմաքննական ստվարածավալ տեսություններ ու գրքերի առաջաբաններ, բազմաթիվ բանավեճեր ու հարցազրույցներ՝ ահռելի գիտական ժառանգություն, որ նախևառաջ բնութագրվում է մեկ հատիկ վերադիրով՝ գիտական-ակադեմիական, ու փաստում, որ գրականության ու ճշգրիտ գիտության նկատմամբ պաշտամունքն էր նախևառաջ ելակետը Սարինյան մարդու և զտարյուն գիտնականի բանիբուն ազգասիրական ու հայագիտական գործունեության:

Սերգեյ Սարինյանի յուրաքանչյուր տողը գիտական է, փաստարկված ու տրամաբանական՝ անկախ նյութից, թե ինչի մասին է նա գրում՝ Ռաֆֆո՞ւ, Մուրացանի՞, հայկական ռոմանտիզմի, հայոց ցեղասպանության մշակութաբանական եզրերի, գրականագիտության մեթոդաբանության, փոքրիկ մի բանաստեղծության, թե՞ իր հուշերի երկրի չքնաղ առասպելի...

Անառարկելի է, որ սարինյանական տեսաբանության մեջ ուղիղ իմաստով մասնավոր քիչ բան կա. և ո՞վ կարող է պնդել, թե նա միայն Ռաֆֆու կամ Շանթի մասին էր գրում, Մուրացանի վիպասանության կերպարները քննաբանում. նրա լայնահայաց դիտակետը ամեն հարցադրման մեջ ու հարցադրման շուրջ տեսնում էր ազգային մտքի պատմությունը, գեղարվեստական զարգացման միասնական ընթացքը, գրական ուղղությունը,

[5] Նույն տեղում, էջ 13:

տիպաբանական համակարգը, որոնք նույնությամբ անդրադարձնում են ազգային կյանքի լույսերն ու ստվերները:

«Առանց գրական ուղղությունների, գեղարվեստական մեթոդների տարորոշման չի կարող լինել գրականության գիտական պատմություն, առանց գեղարվեստական մեթոդի հստակ իմացության չի կարելի դատել գրողի գեղագիտական իդեալի, գեղարվեստական երկի տիպաբանական առանձնահատկությունների մասին»[6],- այսպես, քննաբանվող նյութի բացառիկ իմացությունը, գրապատմական բարդ խնդիրների հստակ ու հիմնավոր ճանաչողությունը երախտաշատ գիտնականին հնարավորություն էին տալիս ոչ միայն բացահայտել գրական ուղղությունների մեթոդաբանական հիմունքներն իրենց զարգացման ընթացքի մեջ, հստակ գիտական հարացույցով բնորոշել ամեն մի պարբերաշրջան, այլև տեղայնացնել ազգային գրականության փաստանյութը համաշխարհային մշակույթի և գիտական ժամանակի համընդհանրական շարժման մեջ:

Հենց այս իմաստով տեսաբան- գրադատի նրա հայացքը մշտապես ուղղված է եղել գրական ընթացքի պատմականությանը, երևույթների փիլիսոփայական էությանը. ամեն տեղ և նախևառաջ նա որոնել է փիլիսոփայությունը՝ պատմության մեջ, գոյաբանական հարցադրումներում, ստեղծագործ անհատականության աշխարհայացքում, և դա նրան հետաքրքրել է ավելի, քան «դիդակտիկ, գեղարվեստական» քննադատությունը, սյուժեի շարժումը կամ հերոսի կերպավորման պրոբլեմները ստեղծագործության հղացքում: «...Տարբերակելով երկերը կատարյալ կամ անկատար, գեղարվեստորեն թույլ կամ հաջողված գնահատականներով, գրականագետները վերլուծության համար ընտրել են «գեղարվեստական տեսակետից արժեքա-

---

[6] **Սարինյան Ս.,** *Հայկական ռոմանտիզմ,* Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1966, էջ 57:

վոր» ստեղծագործությունները, իսկ այսպես կոչված թույլ երկերը հատկացվել են անցումները կապակցող օղակներին: Ուսումնասիրության իմ մեթոդն առհասարակ բացառում է նման ստորաբաժանումը: Գրողի ստեղծագործությունն իմ ընկալմամբ մի ամբողջական կառույց է, որի համակարգում յուրաքանչյուր միավոր ունի իր պատճառական գոյությունը, հետևաբար և քննության ենթակա անհրաժեշտությունը... Այս իմաստով ես ուսումնասիրության իմ սիստեմի մեջ եմ առնում գրողի բոլոր երկերը և քննաբանում նույն մեթոդով և սկզբունքով՝ յուրաքանչյուր երկի արժեքայնության գործակիցը ինքնին հայտնաբերելով վերլուծության գեղագիտական չափումներում»[7]:

Բացարձակ ինքնօրինակ էր նրա հայացքը նաև գրական քննադատության գիտական- համակարգային դրվածքի մասին, որովհետև, ինչպես ինքն էր պնդում. «...իմ ստեղծագործական լաբորատորիայում ես երբեք չեմ անջատել գրականագիտությունը քննադատությունից. չեմ անջատել ոչ թե տարերային ներհայեցողությամբ, այլ որ նրանց նույնականությունն ու մեթոդոլոգիական ընդհանրությունը ինձ համար ըմբռնելի է թե՛ տեսական դրվածքով և թե՛ հոգեբանորեն»[8]:

Ու ինչպես իր կենդանության օրոք, առավել ևս հիմա անկասկածելի է նրա բազմարդյուն տքնանքի գնահատականը՝ հայ գրականագիտական միտքը, մտածումը գիտական բարձրագույն մակարդակի հասցնելու ուղղությամբ: Գիտնական-մտածող- հայագետի նրա աշխատասիրությունը, մտքի մետաֆիզիկական ազատությունն ու անզիջում, երբեմն կոշտ ուղղամտությունը ուղղված էին մեր ազգային իմացականության ներքին համակարգը սահմանելու, հայ գրականությունը, նրա շարժման օրինաչափությունները, ազգային կենսագրության գի-

---

[7] **Սարինյան Ս.,** *Լևոն Շանթ,* Երևան, «Նաիրի» հրատ., 1991, էջ 40:

[8] **Սարինյան Ս.,** *Հայոց գրականության երկու դարը,* հատոր 6, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ. 2015, էջ 236:

ը, նրա հիշողությունը, առհասարակ հայ, հայկական հասկացությունները փիլիսոփայության ֆենոմենի նույնացնելու, փիլիսոփայորեն մեկնաբանելու ու բանականության համաշխարհային-կոսմիկական ընթացքին կապակցելու, ներդաշնակելու գերմարդկային տքնանքին: Տարիներ ի վեր նա մշակել է քննադատական իր ձեռագիրը, անհատականության նկարագիրը, որ անշփոթելի է իրապես:

Սարինյանը գրում էր այնպես, ինչպես ապրում էր, ապրում էր իր գրի նման՝ կամային, բարձր, շիտակ ու չափազանց ազնվական: Ասե՞լ, թե ինչ նվիրվածությամբ էր հայ գրականությանը մոտենում մեծ մտավորականը, երևի անիմաստ է, բայց չնկատել, որ հայ գրականության երկդարյա ընթացքին նրա հայացքի տակ բացասող ոչինչ չկա, ուշացածության, փոքրության, թերարժեքության զգացողությունը չկա, պարզապես չենք կարող: Նրա համար գեղարվեստական տեքստն ինքնին աստվածային տարածք էր, բացարձակ արժեք, ուր ազգային ոգու ֆենոմենոլոգիան երևում է ամենաանխաթար պատմությամբ: Այն, ինչ եղել է, կա՝ նա կարդում ու անվանում էր ճշգրտության հասնող ուղղամտությամբ, որը հնարավոր կարող էր դառնալ երևույթները գիտական համակարգի մեջ տեսնելու բացառիկ սկզբունքայնությամբ միայն:

Նա ոչ միայն գրում էր, այլև հավատում իր Գրին, որոնում իր ընթերցողին: Անցյալ դարի 80-ական թվականներին ո՞վ կարող էր պատկերացնել, որ հայոց ոգու անընդհատական շարժումը իբրև գրականության ընթացք տեսաբանող Սերգեյ Սարինյանը իր ընթերցողի սեղանին պիտի դնի մի կոթողային աշխատություն, մի գաղափարագիր, որ ընթերցելի է գրականագիտության, պատմագրության, ազգաբանության, էթնոհոգեբանության, փիլիսոփայության ևն գիտակարգերի փոխադարձ կա-

պերի և փոխհարաբերությունների համատեքստում: Խոսքը նրա «Հայ գաղափարաբանություն» աշխատության մասին է:

Այս գրքի մեջ ներձուլված է ազգի ինքնաստեղծման ամբողջ պատմությունը, հայոց կոսմոգոնիան՝ որպես գոյութենական փիլիսոփայություն, տիեզերական կամքի ինքնագիտակցում: Այստեղ հայոց կենսագրությունն է՝ իր ֆիզիկական ու հոգևոր հանճարով, իր պարտություններով ու հաղթանակներով, ազգային բանականության իր մաքառմամբ ու գաղտնագրերով՝ վերածնելու իր ոգին, պատմական իր առաքելությունը:

«1988-ի արցախյան շարժմանը հաջորդող տարիներն էին՝ սով, ցուրտ ու մութ, երկրաշարժ, փլուզված, ավերված երկիր,- հուշերի իր գրքում գրում է Սարինյանը,- և, այնուամենայնիվ, անդիմադրելի է ոգու տիեզերական հաղթանակը: Միանգամայն ուրույն իմաստ տվեցի այդ օրերի իմ մեկուսացմանը: Ծածկոցի մեջ փաթաթված, մոմի լույսի տակ որոշեցի վերստին կարդալ համաշխարհային գրականության դասականներին՝ «Իլիականը», «Ոդիսականը», «Դոն Կիխոտը», «Համլետը», «Ֆաուստը» .... «Վերք Հայաստանին», «Կայծերը», «Վարդանանքը» և այլն: Ու մեկուսացումից դուրս եկա հարստացած, ասես վերածնված մտավոր մի այլ մոլորակում: Այս հանգամանքներում է, որ ես հղացա գրելու հայ գաղափարաբանություն գիրքը: Շուրջ չորս տարի, 1994-ի մարտից մինչև 1997-ի դեկտեմբերը: Լույս տեսավ 1998-ի աշնանը: Ես ստեղծեցի վերջին երեք հարյուրամյակի հայոց պատմության փիլիսոփայության քննական տեսությունը, որ նույնն է թե՝ հայոց ազգային գաղափարաբանության գիտությունը»[9]:

«Հայ գաղափարաբանությունը» դարձավ իմ կյանքի գիրքը,»- խոստովանում է Սարինյանը, և այդ գիրքը, մի տեսակ հա-

---

[9] **Սարինյան Ս.,** *Ի հեճուկս, Ստեփանակերտ,* «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2006, էջ 318:

մադրում, ամբողջացնում է նրա գրականագիտական, ազգային-փիլիսոփայական և գեղագիտական հայացքները՝ ի մի բերելով, լուծելով հայոց իմացականության, ազգային Ոգու բարձրագույն արտահայտության մասին տարիների դիտարկումները:

«Տասնամյակներ շարունակ,- գրքին հաջորդած ամենատարբեր հարցազրույցներում ասում էր գիտնականը,- իմ գիտական գործունեության զուգահեռի վրա ինձ մշտապես հետապնդել է մի գաղափար, եղել իմ մտորումների ուղեկիցը, առերևույթ տեսանելի ու պարզ, բայց էապես բարդ ու չգիտակցված հայ իմացաբանության բազմաշերտ նստվածքներում: Խոսքը վերաբերում է հայոց ազգային գաղափարաբանությանը: Ինձ համար արդեն միանգամայն ակնհայտ էր, որ նման ուսումնասիրություն կարող է իրականացվել միայն անհատական ընտրությամբ, քանզի այն ոչ պատմություն է, ոչ գրականագիտություն, ոչ փիլիսոփայություն և ոչ իսկ հասարակական մտքի պատմություն, այլ բոլոր այդ տարրերի մի բարդ համադրություն, ուր հատվում են ազգի գոյաբանության տեսական-փիլիսոփայական եզրերը, նրա՝ որպես տիեզերական սուբյեկտի ինքնությունը՝ էթնոմարդաբանական, պատմատարածքային, սոցիալ-աշխարհաքաղաքական և հոգևոր- մշակութաբանական տիրույթներում»[10]: Ակնհայտ է, որ փիլիսոփա- տեսաբանը իմաստ է տվել նոր հասկացության՝ ստեղծելով նրա ձևն ու բովանդակությունը, նրա պատմությունն ու պարբերացումը, համակարգը, որը նոր էր և առիթ կարող էր տալ բազմաթիվ տարակարծությունների և տարընթերցումների: Ազգերի ձևավորման դարաշրջանի պատմահասարակական զարգացումների ու երևույթների գնահատման պատմականության սկզբունքի հետ է Սարինյանը կապում ազգային գաղափարա-

---

[10] **Սարինյան Ս.,** *Հայոց ազգային գաղափարաբանություն*, Երևան, «Զանգակ-97» հրատ., էջ 308: Երկրորդ լրամշակված հրատարակություն:

բանության ծնունդը, որը ոչ միայն ձևաբանում է պատմամշակութային ողջ արժեհամակարգի՝ պետության, եկեղեցու, գիտություն, լուսավորության, արվեստների նորացման ու նորոգության խնդիրների լայն շրջանակ, այլև հանձն է առնում հասարակական մտքի բանավեճը՝ ազգի քաղաքակրթական հեռանկարի վերաբերյալ՝ թե ո՞վ է ինքը, որտեղի՞ց է գալիս և ո՞ւր է գնում:

Սա այսօր է այսպես, թեև ազգային գաղափարաբանության խիտ ու տարողունակ տեքստը այսօր էլ քչերն են ողջ խորությամբ ընկալում, բայց բնավ չի նշանակում, թե երեկ էլ էր այդպես՝ մանավանդ որ հասարակության մեջ նկատելի էին հասկացության եթե չասենք ժխտման, ապա ընկալման շրջադարձի միտումները[11]:

Հարցադրումը նախ ընկալման տեսակետից բարդություններ ուներ, որոնք պիտի լուծվեին նախևառաջ: Դա ազգային գաղափարաբանության՝ որպես հասկացության վերացականությունն էր, նրա ընկալումը ժամանակից ու տարածությունից դուրս, վերպատմական ինչ-որ անհասկանալի ոլորտում: Ըստ

---

[11] Խոսելով 90-ականների հասարակագիտական մտքի գռեհիկ դրսևորումների և դրանց նախապատճառների մասին՝ Սարինյանը նկատում է. «Այսպես, առանց բանականության պատմականության, ըստ կեցության առօրյա պահանջմունքների դաստիարակվեց մեր գիտական միտքը: Մեր ուսումնասիրություններում մենք մնացինք «իրերի աշխարհի» մակարդակին՝ առանց թափանցելու «սիստեմների աշխարհը»: Եվ ստեղծվեց մի գիտություն, որի մեթոդը դիդակտիկան է՝ դիդակտիկ պատմագիտություն, դիդակտիկ գրականագիտություն, ... «սիրողական պատկերացումներով» հորինաբանված «իռացիոնալ հայրենասիրություն» և այլն: Ինքնին արդեն հասկանալի է, թե ինչպիսի անցում պիտի ես հաղթահարեի «Հայ գաղափարաբանություն» գրքի մեթոդի ընտրության հարցում: Ամենից առաջ հենց հասկացությունը՝ ինչ է հայ գաղափարաբանությունը: 1994-ին «Մոլորակ» թերթում ես հանդես եկա հոդվածաշարով: Դա այն ժամանակ էր, երբ Լ. Տեր-Պետրոսյանը ազգային գաղափարաբանությունը հայտարարել էր «կեղծ կատեգորիա»: Ճիշտ է, մամուլում եղան արձագանքներ հանրապետության նախագահի տեսակետի քննադատությամբ, սակայն հարցի գիտական լուսաբանության փորձեր չեղան: Ես գնացի հենց այդ ճանապարհով», **Հայոց ազգային գաղափարաբանություն,** էջ 311:

այդ մտայնության՝ ազգային գաղափարաբանությունը ոչ թե պատմական կատեգորիա է, այլև միֆ, ֆիկցիա, ուղեղային մոր-մոք, ուր անտեսվում են պատմությունն ու պատմության փիլիսոփայությունը: Ինքնին հասկանալի էր, թե ինչպիսի ահռելի փաստական նյութ պիտի հավաքեր և ինչպիսի անցում պիտի հաղթահարեր Սարինյանը ուսումնասիրության մեթոդի ընտրության հարցում, որպեսզի կարողանար գրել. «Ազգային գաղափարաբանությունը իրական հասկացություն է և գիտականորեն միանգամայն ճանաչելի: ...Այն հարաբերական է ազգային ոգուն, բայց ոգին և գաղափարը նույնարժեք հասկացություններ չեն: Ոգին իռացիոնալ է, նախաստեղծ, անգիտակցական, անբանաձևելի: Գաղափարը երևութաբնական է, նա ոգու արտածումն է գիտակցության մեջ: Ավելի լայն իմաստով՝ «...ազգային գաղափարաբանությունը տվյալ ազգի պատմության փիլիսոփայությունն է, ազգի մտավոր գործունեության ամբողջ փորձի տեսական համադրությունը՝ գիտական, գեղարվեստական, բանահյուսական, կրոնական և այլն»[12]:

Նա պիտի ձևաբաներ գրականության և պատմափիլիսոփայության օրգանական միասնությունը, որը պատմաքննական տեսությանը, իր ուսումնասիրության «գիտակցությանը» ավելի բարդ անցումների ու պատկերացումների հնարավորություն պիտի ընձեռեր, քան կարող էր ընձեռել մշակույթի պատմությունը, հասարակական հոսանքների պատմությունը կամ հասարակական մտքի պատմությունը՝ առանձին, նույնիսկ՝ միասին վերցրած: «Դա մի յուրահատուկ սինթեզ է,- գիտական իր հարցադրման գրեթե անընդգրկելի հեռավորությանը էմպիրիկ շապիկ հագցնող կամ «հացի խնդրի ու շրջափակման, սեփականաշնորհման մակարդակին» իջեցնող «վերլուծաբաններին» ի պատասխան գրում էր Սարինյանը,- որ արտածում է մտավոր

[12] **Սարինյան Ս.,** *Հայոց ազգային գաղափարաբանություն,* էջ 4:

գործունեության բոլոր ոլորտների ձգտումը փիլիսոփայական ընդհանրացման՝ այդ ընդհանրացման մեջ անդրադարձնելով թե՛ սոցիոլոգիայի, թե՛ փիլիսոփայության, թե՛ պատմության... թե՛ գրականության ու արվեստի, թե հասարակական մտքի գիտակցման փորձը: Ահա այս հավաքականությունն է, որ չի գիտակցվում»[13]:

Իսկ այդ «հավաքականության» մեջ ծածկագրերով փոխանցվում է ազգային հիշողությունը, կայուն տեքստերի, գաղափարների, նշանների ու նշանակների համակարգը, որը իբրև գիտակցական կատեգորիա ձևաբանվում և ուղիղ իմաստով կապվում է պատմական ստույգ հանգամանքների և իրողությունների հետ:

Համենայն դեպս, փիլիսոփա-տեսաբանի նրա մտածումներում անկասկած էր հարցը, որ հայ գաղափարաբանությունը չէր կարող ազգի հայացքը ուղղել դեպի ապագան, առանց անցյալում տակավին չլուծված ու չկարևորված բազմաթիվ հարցերի արծարծման:

Այս գիրքը կառուցված է հայոց պատմության ու գրականության ստույգ, բացառիկ մանրամասների ճանաչողության վրա, լույսի ու ստվերների, ինչից և հեղինակը արտածում է գոյաբանական մեր պատմությունը՝ բնագրից վերացարկելով հայոց պատմության փիլիսոփայությունը, ազգային անհատականության առանձնահատկությունն ու քրիստոնեական ոգու ֆենոմենոլոգիան:

Ազգը կազմող մի քանի կարևորագույն բաղադրիչներ՝ բնաաշխարհագրական հայրենիքն ու ժողովրդի էթնիկական ծագումը, պատմությունն ու լեզուն, ցեղային գենետիկան ու ազգային մտախառնվածքը, ըստ Սարինյանի, սովորաբար հան-

[13] Նույն տեղում, էջ 301:

գեցնում են ազգի՝ որպես կենսաբանական միավորի մասին պատկերացումների:

Ազգային գաղափարաբանության այս տեսակը, որը անքակտելիորեն կապված է նախնյաց մշակույթի ու ավանդության հետ, գիտության մեջ վաղուց հայտնի է պերեննիալիզմ անունով, որը կարելի է թարգմանել մշտագո, մշտնջենական հոմանիշներով: Ըստ այս տեսության՝ ազգը մշտնջենական երևույթ է, արմատացած է ժամանակի և տարածության մեջ՝ պատմական ու մշակութային ծածկագրերի գրեթե կայուն տեքստով, ազգային ոգու և էության ճանաչելի բնութագրիչներով: Մի փոքր ավելի ուշ ձևաբանվում է էվոլյուցիոնիստական տեսությունը, որ ազգը համարում է արդիական, քաղաքական կազմավորում՝ կապված սոցիալական հաղորդակցության, ուրբանիզացիայի ու առհասարակ, ժողովրդի ազգային-քաղաքական հեռանկարի հետ: Սարինյանի պատմաքննական տեսության մեջ այս եզրույթները չեն գործածվում, բայց նրա հայացքներն ուղղակի հարում են «մշակութային ազգ» (ազգայնականություն) հանրահայտ տեսությանը, որի արմատները ձգվում են մինչև Հերդեր, Մոնտեսքյո, գերմանական ռոմանտիկների ժամանակներ: Իսկ 19-րդ դարավերջի ֆրանսիացի ու գերմանացի մտածողների գաղափարները փիլիսոփայական- մշակութաբանական հիմունք են Սարինյանի գրեթե բոլոր հատորներում: Ի տարբերություն քաղաքական ազգի հայեցակարգի՝ մշակութային ազգի տեսությունը ձգտում է հանրության հոգևոր վերածնդի՝ պարտադրված պատմական որոշ հանգամանքներով, մեր պարագայում՝ դարեր շարունակ պետություն չունենալու, օտարի լծի տակ Եղիշեի բնորոշմամբ «իր կենդանությամբ իր անձի դիակը տեսնելու» դժխեմ կացությամբ:

Արդ, Սարինյանի «Ազգային գաղափարաբանության» մեջ ինչպե՞ս են հարաբերվում այս հայեցակարգերը, և առհասարակ

ինչպե՞ս է քննում պատմական ժամանակը գրականության մեծ փիլիսոփան: Այս իմաստով ներքին համաչափության ու նպատակայնության տրամաբանությունը Սարինյանի պատմաքննության մեջ կապակցում է գործողությունների շղթան՝ իրականում վկայագրելով ոչ թե արտաքին իրադարձությունները, այլև պատմության ներքին շարժման տրամաբանությունը, որին հեղինակը շատ ավելի լայն ազգակազմիչ- գաղափարական գործառույթ է վերագրում, քան կարող է թվալ առաջին հայացքից:

Հայոց կոսմոգոնիան, ինքնաստեղծումի ունակությունը, Ոգու ձգտումը կատարելության՝ դեպի վերե՛ը, ավելի՛ վերերը, միացնում է իրադարձությունների ծայրերը, կապակցում ընդհատված պատմության դրվագները՝ իրենով լցնելով հայոց ճակատագրի մեջ պակասավոր, կիսատված ամեն բան:

Իմաստուն ու խորատես տեսաբանը պարզապես ցույց է տալիս, թե դեպի ուր է տանում հայ մշակույթի գոյաբանական և փիլիսոփայական ձգտումը, և թե ինչպես է հայ միտքը մշակույթի փիլիսոփայությունից արտածում պատմության փիլիսոփայությունը:

Եվ սա նրա համար ստույգորեն արդարացի մեկնություն է, պատմաքաղաքական ժամանակի ճշմարտացի ընկալում, որովհետև նրա համար միանշանակ էր, թե ինչպես էին իմաստուն ու հեռատես հայ այրերը պատմության բոլոր ժամանակներում և իրենց ձեռնարկումներում փայփայում էթնիկական ինքնության բարձրագույն ձգտման՝ քաղաքական ազգի կամ պետականության գաղափարը: Եվ մի՞թե այդպես չէր Իսրայել Օրու, Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի, Մխիթարյան հայրերի կամ Լազարյանների պարագայում: Եվ մի՞թե իբրև ազգային ինքնության մեծագույն առաքյալների չի գնահատում Սարինյանը Աբովյանին, Միքայել Նալբանդյանին, Մուրացանին, Ռաֆֆուն, Շանթին՝ մի յուրօրինակ բնազանցության մեջ նրանց գոր-

ծերում փնտրելով 19-րդ դարի հայ գրականության աշխարհայացքը, փիլիսոփայությունը, մտքի ձգտումը, որ ուղղված էր Գրի, Բանի մեջ հայրենիքը ստեղծելուն: Եվ ինչ անուն ու պատիվ է տալիս Թումանյանի, Տերյանի, Բակունցի ու Չարենցի՝ ողբերգականորեն մեծ ազգային տեսիլքին:

Ցույց տալով, որ ամբողջ XVIII-XX դարերում հայ հասարակության ազգային-քաղաքական ու գաղափարական շարժումները ձևավորվում ու ծրագրավորվում էին նախևառաջ հայ մեծ գրականության մեջ, Սարինյանը ազգային գաղափարաբանության շարժումը քննում է պատճառահետևանքային կապերի, համընդհանրական պատմության համակարգի ներսում՝ մասնավորից գնալով դեպի ընդհանուրը, ինչպես ինքն էր ասում՝ «իրերի աշխարհից» անցում կատարելով դեպի «սիստեմների, այսինքն՝ փիլիսոփայական համակարգերի աշխարհը»:

Ժամանակի գաղափարները, ըստ Սարինյանի, ձև էին տալիս հասարակական հարաբերություններին, որոնք տիպաբանական պարադիգմի մեջ էին դնում մշակույթի ու գրականության շարժումը:

Նույնն էր նաև գրական հերոսի պարագան: Պատահականությո՞ւն պիտի համարել արդյոք, որ եվրոպական գրականության հետ համեմատած՝ հայ գրականության հերոսը միանգամայն այլ հանգամանքներում գտավ իրեն: Եվրոպական գրականության հերոսը մասնավոր անձն է, հայ գրականության մեջ մասնավոր անձը երբեք հերոս չդարձավ: Սա ընդհանուր օրինաչափություն է: Հայոց գրականության հերոսը միշտ մնաց դետերմինացված՝ պատմական կամ ազգային ճակատագրի տեքստի մեջ փրկության ճանապարհները որոնելիս: «Այն տեսակետը,- ասում է,- թե 19-րդ դարի հայ գրականությունը, ըստ էության, մերը չէ, և մենք 20-րդ դարում ենք ստեղծել մեր գրականությունը, բոլորովին սխալ է: Միանգամայն սխալ տեսա-

կետ: ... Բաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» կարող է դրվել համաշխարհային արկածային գրականության լավագույն նմուշների կողքին: Նաև՝ «Սամվելը», որ համաշխարհային պատմավեպի լավագույն նմուշ է: Վերջապես՝ «Կայծերը», որ յուրահատուկ ազգային էպոս է, որը մեկնաբանելը բավական բարդ է, որովհետև վեպի բովանդակությունը բազմաշերտ է՝ առնված միֆոլոգիական մոտիվի մեջ: Բաֆֆին երևույթներին տվել է համատիեզերական մեկնաբանություն»[14]:

Ուրեմն անձնակա՞ն է արդյոք մեր գրականությունը, թե՞ անանձնական, անձնականության սահմաններո՞ւմ պիտի քննենք Թումանյանի, Տերյանի, Բակունցի, Չարենցի կենսագրությունները, թե...

Տեղ-տեղ Սարինյանն ուղղակիորեն ինքն է կրում ողբերգական անցումների ողջ ծանրությունը, և զարմանք է հարուցում դիտարկումների խորությունը, հայացքի սթափությունը, թե ազգային գաղափարաբանության տեսաբանն ինչպես է նրանց ազգային ու մարդկային ողբերգության մեջ գրի առնում անանձնական մեծությունը, ոգու ձգտումը կատարելության: Օրինակ՝ խոսելով հայոց Առաջին Հանրապետության մասին՝ գնահատության գիտական հիմունքին խառնվում է բացառիկ զգացմունքայնությունը, ու քննադատը պարզապես ստեղծագործում է Առաջին Հանրապետության պատմությունը: «Եվ ճիշտ այդ օրերին,- գրում է,- երբ թուրքական ժանտախտի դեմ հայ ժողովուրդը Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերում ստեղծագործում էր մի նոր Ավարայր, 1918–ի մայիսի 28–ին ծնունդ է առնում Հայաստանի Հանրապետությունը: Դա հայ գաղափարաբանության հաղթանակն էր, հայոց պատմության շրջադարձը դեպի դարավոր իդեալ: Եվ քանի որ պատմությունը

---

[14] **Սարինյան Ս.,** *Պատմությունն անկրահեղի է, Հարցազրույց Անահիտ Աղամյանի հետ,* https://mediamax.am/am/column/121443/, 28 հուլիսի, 2023 թվական:

մշտապես գործում է՝ ի հեճուկս իդեալի ու իրականության անհրաժեշտությամբ, Հայկական Հանրապետության ճակատագիրը հայտնվում է ներքին ու արտաքին հակազդեցությունների կիզակետում: Ռուսաստանը, շլացած արևելքի հեղափոխական զարթոնքն ազդարարող Թուրքիայի առաքելությամբ, իր զորքերը դուրս է բերում Հայաստանի գավառներից և ոճրագործի հայացքն ուղղում հայոց նորանկախ պետության տարածքներին»[15]: Ապա քննաբանելով իրադարձությունների շղթան՝ ամենաճշգրիտ և ուղիղ վերադիրներով թուրքերի ու ռուսների գործակցության, պատմության ամենաստոր փաստաթղթի մասին՝ փակում է պատմության ևս մի ողբերգական շրջան. «Թուրքական սպառնալիքից Հայաստանը զերծ պահելու համար երկրի ղեկավարությունը 1920 թվականի դեկտեմբերի 2-ի «Համաձայնագրով» իշխանությունը հանձնում է բոլշևիկներին: Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր: Հայոց պատմության ժամանակագրությունը գրանցում է բռնությամբ ամայացած մի Արևմտահայաստան՝ թուրքական տիրապետության ներքո, և Արցախի ու Նախիջևանի տարածքներից զրկված մի Արևելահայաստան՝ ռուսական կայսրապետության սահմաններում»[16]:

Ի՜նչ նմանություն այսօրվան, և մի՞թե պատմության շրջապտույտը բոլոր նշաններով կարող է լինել այսքան նույնական:

Իսկ մինչ այսօրվա ողբերգական կացությունը, նախորդում է մի ամբողջ պատմություն, որն արժե հիշել ըստ ամենայնի: Ճիշտ Առաջին Հանրապետության ծնունդի ավետիսի նման, Սարինյանի գրիչը պարզապես ցնծում է, երբ անդրադառնում է Ղարաբաղյան շարժման, Հայաստանում ազգային պետականության, Երրորդ հանրապետության ստեղծման կոնցեպտուալ հարցերին՝ երբեք, սակայն, չկորցնելով սթափությունն ու իրա-

---

[15] **Սարինյան Ս.,** *Հայոց ազգային գաղափարաբանություն,* էջ 89:
[16] Նույն տեղում, էջ 94:

տեսական հայացքը ճամփաբաժանին կատարված պատմաքաղաքական սխալների ու հասարակության ներսում ձևավորված հակասությունների վերաբերյալ: «(Արցախյան) Ազգային շարժման ծրագիրն իր ամբողջության մեջ,- գրում է նա,- կարծես թե ճիշտ է արտահայտում պատմական ժամանակի ոգին և ուղեգծում է անցման շրջանի հիմնական սկզբունքները, ... և իր դրվածքով, անկախ որոշ ծայրահեղություններից, պահպանում է ազգային գաղափարաբանության ավանդական հիմունքները: Ավելին, հակում ունի հայկական ազգային գաղափարաբանությունը միացնելու պետության հետ, այսինքն՝ գաղափարը միացնելու սուբստանցին: Սակայն երբ հետադարձ հայացքով վերստուգում ես այն, ակնհայտ է դառնում, որ հետագա իրադարձությունների ծուռ ընթացքը սկիզբ է առնում մակերեսայնությունից, հոետորականությունից, առօրեական հանդիսավորությունից: Այլ կերպ ասած՝ նրանում պակասում է գիտական վերլուծությունը, պատմականությունն ու փիլիսոփայական համադրությունը»[17]:

Պատմաքննական իր տեսության մեջ Սարինյանի գրիչը առավել կամային, անզիջում ու աննահանջ կրքոտություն է ձեռք բերում Լ. Տեր-Պետրոսյանի, Լ. Խուրշուդյանի, Ջ. Բալայանի, ավելի ուշ՝ նոր հեթանոսացած քաղաքական դուրսպրծուկների ու սրբապիղծների հետ բանավեճերում՝ պնդելով, թե «գաղափարախոսությունն անջատել պատմությունից՝ միևնույնն է, թե հասկացությունը զրկել փիլիսոփայությունից և հումանիտար ազգային սկզբունքը զոհաբերել քաղաքական պրագմատիզմին»: Նա համոզված էր, որ «...պետության կայացման համար անհրաժեշտ է միավորող գաղափարախոսություն. ավելի կոնկրետ՝ ազգային գաղափարախոսություն...»[18]:

---

[17] Նույն տեղում, էջ 230:
[18] Նույն տեղում:

Նրա համար առավել դրամատիկ ու ողբերգական էր «ազգային» ու «պետական» եզրույթների հակադրությունը, որովհետև պատկերացնել պետություն հասկացությունն առանց մշակութային գիտակցության (ոչ թե մշակութային սնապարծության) ու ազգային գաղափարաբանության, նրա համար նույնական էր ինքնաոչնչացման, ազգային ինքնասպանության:

Այո՛, «Մենք ապրել ենք մեր պատմությունը և գիտակցել ենք մեր պատմությունը,- գրում է նա,- մետաֆիզիկորեն սա միանգամայն իրավացի գիտակցում է, բայց այս ըմբռնման բացարձակացումը կհանգեցնի ազգի մեկուսացման: Հարցի ամբողջ բարդությունն էլ այն է, թե ինչպես հաշտեցնել ազգային նկարագիրը, ազգային մենթալիտետը «աշխարհի ժամանակակից պատկերին»: Ապա մեր միջից ինչպե՞ս դուրս հանել ամեն ինչի մասին կեղծ գիտությունը՝ իրերի աշխարհի մակարդակին ստեղծված դիդակտիկ պատմագիտությունը, դիդակտիկ գրականագիտությունը, սիրողական պատկերացումներով հորինաբանված իռացիոնալ հայրենասիրությունը, տրոհված, գետնաքարշ ազգային գաղափարաբանությունը:

Մնում է միայն ազգային ներքին դիմադրողական ջիղը, միջուկի չտարրալուծումը՝ չդիմազրկվելու համար: Եվ ինչ խորատես էր նա, և խոսում էր իբրև մեծ մարգարե ու փիլիսոփա: «Այստեղ,- ասում է,- արդեն էական գործոն է պետության գոյությունը, որ ազգ է խորհրդանշում և պահպանում նրա ֆիզիկական ամբողջությունը: Ինքնության առաջնային նշանակություն են ստանում մշակույթը, լեզուն, պատմությունը, կրոնը, բնաշխարհը, որոնք էթնիկական ինքնության հաղորդիչներ են և ապրում են ազգի կենսաբանական բջիջներում: Կպահենք՝ շարունակություն կունենանք, եթե ոչ...»[19]: Ցավո՛ք:

[19] Նույն տեղում, էջ 302:

Սերգեյ Սարինյանը չդադարեց գրել մինչև իր կյանքի վերջին օրը:

Ազգային ճակատագրի ցավով ու տագնապներով դառնացած ծերունազարդ գիտնականը հարցազրույցներ էր տալիս, հանդես գալիս ազգի ու ազգային գաղափարաբանության վերաբերյալ ելույթներով ու հոդվածներով, իրար կապակցում պատմամշակութային ու կենսափիլիսոփայական հասկացությունները՝ ըստ էության հանձն առնելով նաև այսօրվա ու վաղվա ծանրությունը՝ մեղքի, անունակության ու ոգեկանության սահմանը զանազանելու, մեր պայծառամիտ նախնիներից ստացած ժառանգությունը անխաթար ազնվությամբ վաղվա սերնդին փոխանցելու:

Սերգեյ Սարինյանի ողջ գիտական ժառանգությունը, մասնավորապես «Հայոց ազգային գաղափարաբանություն» աշխատությունը դեռ շատ սերունդներ է կրթելու...

Եզրակացություններ

XX դարի երկրորդ կեսի, XXI դարի առաջին երկու տասնամյակների հայ գրաքննադատության ու գրականագիտության ակնառու դեմքերից է գրականության պատմաբան, տեսաբան-փիլիսոփա, մեծ հայագետ Սերգեյ Սարինյանը:

Տեսաբան- գրադատի նրա հայացքը մշտապես ուղղված է եղել գրական ընթացքի պատմականությանը, երևույթների փիլիսոփայական էությանը. ամեն տեղ և նախևառաջ նա որոնել է փիլիսոփայությունը՝ պատմության մեջ, գոյաբանական հարցադրումներում, ստեղծագործ անհատականության աշխարհայացքում, գրականության ժամանակի և ընթացքի մեջ:

Սարինյանն իր գիտական բազմարդյուն գործունեության ընթացքում առաջադրել և հանգամանորեն լուծել է մի կարևորագույն՝ գրականագիտության գիտականացման խնդիրը՝ դիտարկելով այն իբրև առանձին գիտություն գեղարվեստական

գրականության համակողմանի ուսումնասիրության, նրա էության, ծագման, գրական երկի կառուցվածքի ու գեղագիտության, գրապատմական ընթացքի մասնավոր ու ընդհանուր օրինաչափությունների մասին:

Ավելին, երկար տարիների իր քննադատական-գրականագիտական գործունեության արդյունքում մեծ հայագետը ձևաբանել է «գրականության փիլիսոփայություն» հասկացությունը, ճշգրտել նրա էականությունը՝ քննության կենտրոն բերելով ոչ այնքան հարցի «մեթոդաբանական դրվածքը», որքան բացելով հետազոտության մի լայնատարած ասպարեզ, որտեղ տրվում է գիտակարգի հստակ սահմանումը:

Ըստ Սերգեյ Սարինյանի դիտումների՝ փիլիսոփայական գրականագիտությունը ընդլայնում է գրականության աշխարհայացքը՝ երկի բովանդակության մեջ դիտարկելով նրա փիլիսոփայական, հոգեբանական, բարոյական և գաղափարական մակարդակները, հնարավորություն ընձեռելով տեքստի բազմաշերտ իմաստների և գրողի՝ որպես հեղինակի ստեղծագործական անհատականության խորքային ճանաչողության:

Անցյալ դարի վերջին տասնամյակում Սարինյանն ընթերցողի սեղանին է դնում իր կոթողային աշխատությունը՝ «Հայոց ազգային գաղափարաբանություն»-ը, որն ընթերցելի է գրականագիտության, պատմագրության, ազգաբանության, էթնոհոգեբանության, փիլիսոփայության ևն գիտակարգերի փոխադարձ կապերի և փոխհարաբերությունների համատեքստում**:**

«Հայոց ազգային գաղափարաբանություն» գրքում փիլիսոփա-տեսաբանը իմաստ է տվել նոր հասկացության՝ ստեղծելով նրա ձևն ու բովանդակությունը, նրա պատմությունն ու պարբերացումը՝ գրելով. «...Ազգային գաղափարաբանությունը տվյալ ազգի պատմության փիլիսոփայությունն է, ազգի մտավոր գործունեության ամբողջ փորձի տեսական համադրությու-

նը՝ գիտական, գեղարվեստական, բանահյուսական, կրոնական և այլն»:

Սարինյանի «Ազգային գաղափարաբանություն»ը կառուցված է հայոց պատմության ու գրականության ստույգ, բացառիկ մանրամասների ճանաչողության վրա, ինչից և հեղինակը արտածում է գոյաբանական մեր պատմությունը՝ բնագրից վերացարկելով հայոց պատմության փիլիսոփայությունը, ազգային անհատականության առանձնահատկությունն ու քրիստոնեական ոգու ֆենոմենոլոգիան:

Հմուտ հայագետի և՛ «Հայոց ազգային գաղափարաբանություն» կոթողային աշխատությունը, և՛ մյուս գործերը դեռևս չընթերցված-չմեկնաբանված բազմաթիվ էջեր ունեն ու սպասում են հետազոտողին:

СИРАНУШ МАРГАРЯН
Кандидат филологических наук,
заведующая отделом
Классической армянской литературы Института
литературы имени Манука Абегяна
Национальной академии наук Республики Армения

СЕРГЕЙ САРИНЯН: ТЕОРЕТИК НАЦИОНАЛЬНОЙ ИДЕОЛОГИИ

Резюме

Армянское литературоведение второй половины XX века и первых двух десятилетий XXI века невозможно представить без такой значительной фигуры, как академик Сергей Саринян.

Сергей Саринян был историком литературы и философом, выдающимся теоретиком и организатором науки, педагогом, чья

обширная деятельность в области арменоведения и усилия, направленные на преобразованиеи развитие армянской научной мысли, неоценимы; его вклад огромен по своей ценности и масштабу, а многие страницы его творчества остаются неизученными.

В центре научных интересовСариняна всяармянская литература с ее многовековой историей, включая ее древний и средневековый, новый и новейший периоды. Саринян, как личность, обладающая огромным научным потенциалом и сильной волей, был там, где оставались неохарактеризованные четко литературные реалии и нерешенные проблемы, имели место неочерченные границы, концепции, исследующие одновременный ход литературной, критической и национальной жизни.

Саринян – один из немногих наших теоретиков, который высказывал в этом отношениисвои опасения, писал о литературно-критических и литературоведческих школах, их границах и предъявляемых ими требованиях.

Именно в этом смысле образ Сергея Сариняна является более многослойным, выходит за рамки литературоведческой деятельности: благодаря своему человеческому облику, качествам ученого и национального деятеля он стал классиком при жизни, своеобразным законодателем в области мысли, чьюславу и авторитет в научно-культурной жизни Армении было невозможно обойти стороной.

В статье рассматриваются принципы научной деятельности известного литературоведа-теоретика, его литературоведческие, литературно-критические труды, особенности его научного метода. Вкратце рассмотренаего теория «Национальная идеология», ее исходные принципы и основополагающиеформулировки.

Ключевые слова: *Сергей Саринян, два века армянской литературы, историк литературы, литературная критика, философия лите-*

ратуры, философия истории, национальная идеология, теория истории и литературы, национальный дух.

SIRANUSH MARGARYAN
PhD, Candidate of Philological Sciences, Associate Professor, researcher of the Institute of Literature of the National Academy of Sciences of the Republic of Armenia

SERGEY SARINYAN: THEORIST OF NATIONAL IDEOLOGY

Abstract

It is impossible to imagine the Armenian literary studies of the second half of the 20th century and the first two decades of the 21st century without the presence of such a significant figure as academician Sergey Sarinyan.

Sergey Sarinyan was a literary historian and philosopher, an outstanding theorist and an organizer of science, a pedagogue, whose extensive work in the field of Armenology and efforts aimed at the transformation and development of the Armenian scientific thought are invaluable; his contribution is enormous by its value and scale, but many pages of his creative work remain unstudied.

The whole Armenian literature with its centuries-old history, including its ancient and medieval, modern and contemporary periods, is in the center of Sarinyan's scientific interests. Sarinyan, as a person with an enormous scientific potential and strong will, was there, where the literary realities and unresolved problems remained uncharacterized, where there were undefined boundaries, concepts that studied the simultaneous development of the literary, critical and national life.

Sarinyan is one of the few of our theorists, who expressed his concerns in this regard, wrote about literary-critical and literary schools, their boundaries and the principles they upheld.

It is in this sense that Sergey Sarinyan's image is more multi-layered and goes beyond the scope of literary studies: thanks to his human image, the qualities of a scientist and a national figure, he became a classic during his lifetime, a unique legislator in the field of thought, whose fame and authority could not be ignored in the scientific and cultural life of Armenia.

The article examines the principles of the scientific activities of the famous literary theorist, his literary studies, literary-critical works and the features of his scientific method. His "National Ideology" theory, its initial principles and fundamental formulations have been briefly considered in the article.

Keywords: *Sergey Sarinyan, the two centuries of the Armenian literature, a literary historian, literary criticism, the philosophy of literature, the philosophy of history, national ideology, the theory of history and literature, national spirit.*